ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒԻՐԵՐ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՃԵՄԱՐԱՆԸ 190 ՏԱՐԵԿԱՆ Է

2011 թվականի ապրիլի 2-ին Կալկաթայում (Հնդկաստան) նշվեց Մայր Ա-թոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Հայոց մարդասիրական ճեմա-բանի հիմնադրման 190-ամյակը:

Ձեռնարկը մեկնարկեց Տերունական աղոթքով եւ Հնդկաստանի ու Հայաս-տանի Հանրապետության օրհներգերով:

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի կրթական տնօրենը: Այնուհետեւ Մարդասիրականի պարախումբը ներկայացրեց մի գեղեցիկ հնդկական պար, որին հաջորդեց կրթօջախի երգչախմբի ելույթը: Ապա 2010-2011 ուսումնական տարվա շրջանավարտներին հանձնվեցին ճեմարանի անունը կրող ժամացույցներ, իսկ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պարգեւատրվեցին գովասանագրերով եւ ստացան խրախուսական նվերներ:

Հանդիսության ընթացքում ցուցադրվեց հնդկահայ երեւելիների եւ հայ-հնդկական հարաբերությունների մասին պատմող տեսանյութ: Իսկ հանդիսու-թյան բարձրակետն էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Կալկաթայում լույս տեսած «Հնդկահայք» երկլեզու (հայերեն-անգլերեն) երկրորդ տարեգիրքը, որը ներկայացրեց գրքի հիմնադիր-հրատա-րակիչ, հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառա-վարիչ Հայր Խորեն Հովհաննիսյանը: «Հնդկահայք» 2010-ում խրացել են հնդկահայոց հոգեւոր հովվության եւ Հնդկաստանում «կտոր մը Հայաստանի»՝ Հայոց մարդասիրական ճեմարանի անցուդարձը, մեր շնորհալի ուսանողների ուսումնական ու մարզական նվաճումները: Տարեգրքում տեղ են գտել հընդկահայ համայնքի հարյուրամյակների պատմությունը լուսաբանող հոդվածներ, ինչպես նաեւ աշխարհի տարբեր ծագերից անդրանիկ հրատարակությունը գնահատող եւ արժեւորող նամակներ, որոնք պարտավորեցնող էին եւ խթան հանդիսացան «Հնդկահայք» 2010-ը կյանքի կոչելու գործում», - նշեց Հայր Խորենը:

Ձեռնարկին ներկա էին ճեմարանի աշակերտությունը, ուսուցիչները, պաշտոնեությունը, Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցու վարչության անդամները, համայնքի ներկայացուցիչներ եւ հյուրեր:

Հայոց մարդասիրական ճեմարանը հիմնադրվել է 1821 թվականի ապրիլի 2-ին՝ Աստվածատուր Մուրադխանյանի եւ Մնացական Վարդանյանի բարերարությամբ: Կրթօջախը Կալկաթայի երկրորդ ամենահին դպրոցն է:

Հանդիսությունը հարգանքի տուրք էր դպրոցի հիմնադիրների պայծառ հիշատակին:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

«ՌՈՍԿՈՍՄՈՍԻ» ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Ապրիլի 7-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից Մայր Աթոռի միաբան Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանն ընդունեց «Ռոսկոսմոսի» պատվիրակությանը, որ Հայաստան էր ժամանել առաջին փիեզերագնաց Յ. Գագարինի թռիչքին նվիրված «Միաբանության կովկասյան էսպաֆետ» ֆորումի միջոցառումների առիթով:

Հանդիպմանը ներկա փիեզերագնացները եւ գիտնականները Նաթան Սրբազանին ներկայացրեցին ֆորումի նպատակները:

Ողջունելով ֆորումի մասնակիցների այցն ամենայն հայոց հոգեւոր կենտրոն՝ Սրբազան Հայրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը փոխանցեց ներկաներին՝ կարեւորելով ժողովուրդների միաբանությանն ու փոխգործակցության զորացմանն ուղղված նրանց ջանքները: Այս առնչությամբ Նաթան Սրբազանը անդրադարձավ նաեւ փիեզերագնացների կարեւոր առաքելությանն ու դժվարին հանձնառությանը՝ գնահատանք հայտնելով նրանց ի դեմս հանդիպմանը ներկա օդաչու-փիեզերագնաց Միխայիլ Տյուրինի:

Վերջում Սրբազան Հայրը հորդորեց ֆորումի մասնակիցներին, հավատարիմ մնալով ժողովուրդների դարավոր եղբայրության ավանդներին, շարունակել փիեզերագիտության ոլորտում գասնամյակների համատեղ աշխատանքը՝ այն ծառայեցնելով մարդկության կյանքի բարօրությանը եւ առաջընթացին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ ՄԵԿՆԵՑ ԺՆԵՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ապրիլի 8-ին Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը մեկնեց Փարիզ: Ապրիլի 9-ին Հայր Մեսրոպը ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի հետ կժամանի Ժնեւ:

Գերագույն հոգեւոր խորհրդի հանձնարարությամբ ապրիլի 10-ին, Ժնեւի Ս. Հակոբ առաջնորդանիստ եկեղեցում, Շվեյցարիայի հայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահը Հովնան Սրբազանի կողմից կներկայացվի հայ համայնքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԾԱՂԿԱԶԱՐԴԸ ՏՈՆՈՒՄ ԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի աջակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի հետ համատեղ մանուկների օրհնության օր հռչակված Ծաղկազարդի առիթով իրականացրեց «Ծաղկազարդը» տոնում են մանուկները ծրագիրը:

Ծրագրի նպատակն էր նպաստել հայ մանուկների հոգեւոր-ազգային գիտակցության ձեւավորմանը եւ դաստիարակությանը, խրախուսել մանկապարտեզներում ազգային-եկեղեցական տոների անցկացումը: «Ծաղկազարդը տոնում են մանուկները» իրականացվում էր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան թեմերի եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցաբար:

Ծրագրի շրջանակներում ապրիլի 11-20-ը Երեւանի եւ ՀՀ մարզերի ավելի քան չորս հարյուր մանկապարտեզներում անցկացվեցին Ծաղկազարդին նվիրված տոնական ցերեկույթներ, որոնց մասնակցում եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ մանուկներին ուղղված օրհնության խոսքն էին փոխանցում համայնքների հոգեւոր հովիվները: Մանկապարտեզներին տրամադրվում էր նաեւ մանկական հոգեւոր գրականություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ՈՒՂՂԵԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ՀԻՇԱՏԱԿԵԼՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2011թ. Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի եւ Հայոց Ցեղասպանության հիշատակման օրվա համընկնման կապակցությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի եւ Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղարներ՝ դոկտ. Օլավ Թվեյթն ու դոկտ. Վիտրել Իոնիտան, իրենց զորակցությունը հայտնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, ապրիլի 13-ին հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ կոչ անելով բոլոր անդամ Եկեղեցիներին՝ Զատկական ուղերձներում վկայակոչելու Հայոց Մեծ Եղեռնի 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը:

Ստորո եւ ներկայացվում է ուղերձն ամբողջությամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զատիկը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության օրը, այս տարի ապրիլի 24-ին է, որը համընկել է Հայոց Ցեղասպանության հիշատակման օրվա հետ: 1915թ. սկսած առաջին անգամն է, որ ապրիլի 24-ը Հայոց Եկեղեցու տոնացույցով համընկել է Զատկի կիրակիին: Հիրավի, սա իմաստալից համընկնում է, քանզի հենց հայ ազգի եւ ժողովրդի գոյությունը Հարության ուժի հատուկ խորհրդանիշ է մահվան աշխարհում: Երբ ամբողջ աշխարհի քրիստոնյաներն այս տարի միեւնույն օրն են տոնախմբում Զատիկը, դա մեզ բոլորիս համար պատմական հնարավորություն պետք է լինի՝ Հայոց Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար:

Քանի որ Հայ Առաքելական Եկեղեցին եւ Հայ ժողովուրդը վկայակոչում են Հայոց Ցեղասպանության 96-րդ տարելիցը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը եւ Եւրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը կոչ են անում բոլոր անդամ Եկեղեցիներին՝ իրենց աղոթքներում եւ 2011թ. Զատկական ուղերձներում հիշատակելու Հայոց Ցեղասպանության 1.5 միլիոն զոհերին:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը բարձրացրել է Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման անհրաժեշտության հարցը: 1984 թ. ԵՀԽ-ն հրապարակել է «Հայաստան. շարունակվող ողբերգություն» անունը կրող փաստաթուղթը, որը նպատակ հայ ժողովրդի պատմության եւ վերապրած ողբերգության ճանաչմանը: Միջազգային հարցերով Եկեղեցիների հանձնախումբը Հայոց Ցեղասպանության հարցը բարձրացրել է ՄԱԿ Մարդու իրավունքների հանձնաժողովում՝ հենվելով վերջինիս «Ցեղասպանություն ոճրագործության կանխման եւ հատուցման հարցի վերանայված եւ թարմացված զեկույցի» վրա: Ինչպես նշվել է 2005թ. ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի հանդիպման ընթացքում, ԵՀԽ-ն հավատացած է, որ «քրիստոնեական տեսանկյունից դեպի արդարություն եւ համերաշխություն տանող ճանապարհը պահանջում է այն հանցանքի ճանաչումը, որն իրագործվել է, որպես հիշողությունների դարմանման եւ ներման հնարավորության համար անհրաժեշտ պայման: Ներել նշանակում է ոչ թե մոռանալ, այլ հետադարձ հայացք նետել՝ արդարությունը, մարդկային իրավունքների հանդեպ հարգանքը եւ ոճրագործների ու զոհերի միջեւ հարաբերությունները վերականգնելու նպատակով»:

2005թ. ապրիլի 15-ին Եւրոպական Եկեղեցիների նախագահությունը եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը հանդես եկան համատեղ հրապարակային հայտարարությամբ՝ հրավիրելով բոլոր անդամ Եկեղեցիներին «ապրիլի 24-ը Հայոց Ցեղասպանության հիշատակման օր դարձնելու եւ մտածելու Հայոց Ցեղասպանության 90-րդ տարելիցի հիշատակմանը վերաբերող հետագա պատշաճ քայլեր ձեռնարկելու ուղղությամբ»: ԵԵԿ նախագահությունը հետագայում Թուրքիայի կառավարությանը կոչ արեց հայ եւ թուրք ազգերի միջեւ հաշտեցման գործընթաց սկսելու, որտեղ մեղքի գիտակցումն ու ճշմարտության հռչակումը անբաժանելի տարրեր պիտի լինեն»:

Այս տարի Զատկի Կիրակիի հանդեպ մեր մոտեցման ոգով՝ ի Հիսուս Քրիստոս մեր բոլոր հավատակիցներիբայրներին եւ քույրերին կոչ ենք անում միանալ հայ ժողովրդին՝ հայերի եւ ցեղասպանության այլ զոհերի համար աղոթք բարձրացնելով:

Եկեք հիշենք, թե ինչ ասաց Քրիստոս. «Ես իսկ եմ հարություն եւ կյանք.

Ով հավատում է ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի. եւ ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Յովհ. ԺԱ 25):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Ապրիլի 17-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնախմբում է Ծաղկազարդը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Ծաղկազարդի տոնը տարիներ առաջ հռչակվել է նաեւ որպես մանուկների օրհնության օր: Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորական ուղերձ է հղել մանուկներին, որում մասնավորապես ասվում է.

«Մեր սիրելի զավակներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ Մանուկների օրհնության օրվա առիթով, որն առավել պայծառանում է Ծաղկազարդի տոնի հոգեզվարթ խորհրդով:

Ձեզ պես մանուկներ Երուսաղեմում ընդառաջ ելան, ողջունեցին մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսին եւ ընդունեցին Նրա օրհնությունը: Այսօր դուք եւս, ձեր ծնողների ուղեկցությամբ ուռենու ճյուղեր առած, ուրախ հոգով գնում եք եկեղեցիներ՝ սպասելու մեր Տիրոջ օրհնությունը: Փրկչի օրհնությունը ձեզ վրա է սիրելիներ, ամուր պահեք սերը մեր Սուրբ Եկեղեցու եւ Հայրենիքի հանդեպ եւ ապրեք՝ հավատալով ու վստահելով Աստծուն, հավատարիմ մնալով Նրա պատվիրաններին:

Մանուկների օրհնությունն իր խորհրդով պիտի զորացնի նաեւ ձեր ծնողաց սրտերում սիրո, զոհողության ու անձնվիրումի ոգին: Այն պիտի առիթ դառնա վերստին արժեւորելու եւ գնահատելու հայրենի ավանդների ու քրիստոնեական արժեքների վրա խարսխված կրթությունն ու դաստիարակությունը, որոնք երաշխիքներն են մեր Հայրենիքի ու ժողովրդի վաղվա լուսավոր եւ պայծառ կյանքի:

Սիրելի զավակներ Մեր, աղոթքով առ Բարին Աստված մաղթում ենք ձեզ երկնաբաք պարգեւներով լեցուն, ուրախ ու անվրդով մանկություն: Թող մեր Տեր Հիսուս Քրիստոս պահի ու պահպանի ձեզ եւ ձեր ծնողներին Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո այսօր եւ միշտ: Ամեն»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 17-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Ծաղկազարդը, որը Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակն է:

Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում առավոտյան կատարվեց հանդիսավոր ժամերգություն: Ժամերգության ավարտից հետո Մայր Տաճարի առջև, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Անդաստանի արարողություն, ապա օրհնվեցին ուռենու ճյուղեր եւ բաժանվեցին ներկա հավատացյալ ժողովրդին:

Այնուհետեւ կատարվեց մանուկների օրհնության հատուկ կարգ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը եկեղեցականաց դասի հետ օրհնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօռնեկյան դպրոցի աշակերտներին եւ արարողությանը ներկա մանուկներին, ապա երեխաներին նվերներ բաժանվեցին:

Նույն օրը Մայր Տաճարում տոնի առիթով մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը: Արտակ Սրբազանն իր քարոզում անդրադարձավ Ծաղկազարդի խորհրդին ու մեր կյանքում նրա այսօրվա պատգամին: «Տոնական այս օրերին եկեք մեր ունեցած եւ փայփայվող հոգեւոր ազնվագույն սլացքով, մեր վեհ ու վսեմ ձգտումներով, ամբողջական անձնվիրությամբ դիմավորենք Հիսուսին: Ձիթենու կամ ուռենու ոստերով սկսած եւ հրաշափառ Ս. Հարությամբ ավարտվող ավագ շաբաթն ապրենք եւ ապրեցնենք խորհրդավոր ու հպարտ, որով յուրաքանչյուր օր եւ դրվագ մեր սրտերից սեր հոսեցնելու պատճառ եւ խթան կդառնա: Եւ Նա, Ով մահվամբ մահը կործանեց, Իր կենարար արյան վտակներով խաչը սրբագործեց, տառապանքի ճանապարհն անտրտունջ հատեց՝ սերն ապրեցնելու համար, թող լուսավորի մեր մտքերն ու սրտերը, որ կարողանանք գիտակցաբար պատրաստ լինել եւ աղաղակել՝ Օվսանա այնտեղ, որտեղ մեծարելու եւ գնահատելու վեհ եւ արժանի գործեր կան: Այսօր այս մտածումներով եւ խոհերով խնդրենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ խաչի անցած իր ճանապարհը շնորհ եւ օրինակ դարձնի մեր կյանքի բոլոր ճանապարհներին»,- իր քարոզում նշեց պատարագիչ Սրբազան Հայրը:

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբության հանդիսապետությամբ վերստին կատարվեց մանուկների օրհնության կարգ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԻՐԻՄԻՆ

Ապրիլի 17-ին Գուգարաց թեմի «Նարեկացի» եկեղեցասեր երիտասարդաց միությունը, թեմական առաջնորդ գերաշնորհ տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի օրհնությամբ եւ առաջնորդությամբ, արդեն ավանդույթ դարձած ուխտագնացություն էր կազ-

մակերպել դեպի Օձուն՝ հանդիսությամբ նշելու Սուրբ Հովհան Օձնեցի Կաթողիկոսի ննջման 1283-ամյակը:

Այս տարի Սուրբ Հայրապետի ննջման օրվան համընկավ նաեւ Ծաղկազարդը: Եւ թեմի մի շարք բնակավայրերից Եկեղեցասեր երիտասարդաց միության նախաձեռնությամբ շուրջ հինգ հարյուր ուխտավորներ մեկնեցին Օձուն: Երիտասարդները նախ մասնակցեցին Օձունի Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցված Սուրբ Պատարագին, որ մատուցեց եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Վրթանես քահանա Բաղալյանը:

Պատարագից հետո կատարվեց մանուկների օրհնության կարգ:

Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Զուլջյանը, օրհնանքի խոսք հղելով ուխտավորներին, նշեց, որ անչափ ուրախալի է, որ այսօր կարողանում ենք միասնական ուխտի դուրս գալ՝ պահելով մեր ավանդույթներն ու արժ եւորելով մեր անցյալը:

Ապա ուխտավորները ներկա գտնվեցին եկեղեցու զանգերի օծմանը, որ նվիրաբերել էր «Վալեքս» խմբի ընկերությունների ղեկավար Վալերի Մեջլումյանը: Օծվեցին նաեւ նկարիչներ Լեմս Ներսիսյանի եւ Սերգեյ Սավադյանի՝ եկեղեցուն նվիրաբերած Սուրբ Հովհաննես Օձնեցի Կաթողիկոսի նկարները:

Օծման արարողությունից հետո ներկաները ունկնդրեցին Օձունի դպրոցականների կազմակերպած փոքրիկ համերգը, ճաշակեցին գյուղապետարանի կողմից մատուցված ավանդական մատաղը:

Հետայնու ուխտավորները մեկնեցին Արդվի, ուր ամփոփված է Սուրբ Հովհան Օձնեցու աճյունը: Կատարվեց երկրպագություն Սուրբի շիրիմին, ուր հայրաբար օրհնեց ու քարոզեց թեմական առաջնորդը:

Վանաձորից մեկնած երեք փոխադրամիջոցներ տրամադրել էր Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավոր, ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանը: Իսկ ամենաուրախալին այն էր, որ որոշ բուհեր ու երիտասարդական խմբեր ուխտի էին ելել սեփական միջոցներով, ինչն արդեն վկայում է ուխտի եկած երիտասարդների հոգեւոր ու հայրենասիրական դաստիարակության մասին:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՒՐԱՍԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻՆ

Ապրիլի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ղազախստանի Լ. Գումիլեւի անվան եւրասիական ազգային համալսարանի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի եւ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը ողջունեց երկու բարձրագույն կրթական հաստատությունների միջև նոր ձևավորվող համագործակցությունը՝ բարի արդյունավորում մաղթելով ձեռնարկված համատեղ աշխատանքներին: Վեհափառ Հայրապետը կարևոր նկատեց գիտության մշակների առաքելությունը ոչ միայն գիտության զարգացման, այլև արժանավոր քաղաքացիներ, ազգի նվիրյալ զավակներ կերտելու գործում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց միջկրոնական հարաբերություններին և Հայ Առաքելական Եկեղեցու ներգրավվածությանը միջկրոնական երկխոսության մեջ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ վերհիշեց իր այցելությունը Ղազախստան Կրոնական առաջնորդների համաժողովի առիթով՝ գնահատանքով նշելով այն կարևոր ներդրումը, որ Ղազախստանի Հանրապետության նախագահն ունի կրոնների և ժողովուրդների միջև համերաշխության, խաղաղ և անվրդով համագործակցության հաստատման գործում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 21-ին, վաղ առավոտից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվեցին Ավագ Հինգշաբթի օրվա արարողությունները: Միածնաէջ Սուրբ Տաճարում առավոտյան ժամերգության ավարտին կատարվեց Ապաշխարողաց կարգը, ապա մատուցվեց Ս. Պատարագ՝ ի հիշատակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի ժամանակ Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման:

Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Շահե արեղա Ալանյանը: Ս. Պատարագի ընթացքում Հոգեշնորհ Հայր Սուրբն ընթերցեց Ս. Բարսեղ Կեսարացու ճառը՝ ասված Ավագ Հինգշաբթի Ս. Հաղորդությունից առաջ:

Կեսօրից հետո Մայր Տաճարում կատարվեց Ոտնլվայի արարողությունը: Միաբանների թափորը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին Վեհարանից առաջնորդեց Ս. Տաճար, ուր Նորին Սրբության հանդիսապետությամբ աղոթքների ընթերցումից հետո Ս. Խաչով և Ավետարանով օրհնվեցին յուղն ու ջուրը: Հայրապետական «Պահպանիչ» աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հիսուս Քրիստոսի օրինակով ծնրադիր լվաց և օրհնված յուղով օծեց առաքյալներին խորհրդանշող 12 անձանց ոտքերը: Ոտնլվայի համար ընտրվել էին երկու եպիսկոպոսներ, երկու աբեղաներ, երկու ճեմարանականներ, համալսարանական երկու երիտասարդներ, երկու զինվորներ և երկու մանուկներ:

Յուղի օրհնություն

Ուրբաթ ավարտվեց Ավետարանի այն հատվածի ընթերցմամբ, ուր հիշատակվում է Քրիստոսի կողմից կատարված ոտնլվան:

Արարողությունից հետո օրհնված յուղը սարկավագները բաժանեցին ներկա հավատավոր ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ավագ Ուրբաթ օրվա արարողությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսվեցին ապրիլի 21-ի երեկոյան՝ Խավարման կարգով: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվող խորհրդավոր արարողության ընթացքում Ավետարաններից յոթ հատվածներ ընթերցեցին, որոնք բովանդակում են Հիսուս Քրիստոսի Գեթսեմանիի պարտեզում աղոթելը, Հուդայի մատնությունը, Հիսուսի՝ ամբոխի ձեռքը հանձնվելը, Աննայի եւ Կայիափայի առջեւ տարվելը, անարգվելը եւ Պետրոսի երեք անգամ ուրանալն ու զղջալը: Ընթերցումներն ընդմիջվում էին սաղմոսների ընթերցանությամբ եւ Ս. Ներսես Շնորհալու հեղինակած շարականներով:

«Ուր ես, մայր իմ» հոգեւոր երգից հետո քարոզ խոսեց Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանը՝ անդրադառնալով օրվա խորհրդին, քրիստոնյայի հոգեւոր կյանքում նրա նշանակությանը:

Ապրիլի 22-ին՝ կեսօրին, Մայր Տաճարում կատարվեց Քրիստոսի խաչելությունը խորհրդանշող արարողությունը, իսկ երեկոյան ժամերգության ավարտին՝ Թաղման կարգը, որի ընթացքում մեր Տեր Հիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը միաբանների թափորով պտտեցվեց եկեղեցու շուրջը՝ ի տես բարեպաշտ ժողովրդի:

Ապրիլի 23-ին՝ Ավագ Շաբաթ, եկեղեցիներում երեկոյան ժամերգությունից հետո տեղի ունեցավ Ճրագալույցի Ս. Պատարագ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 24-ին, ժամը 16^{30}-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Մայր Տաճարի հարեւանությամբ կանգնեցված Աղոթքի եւ ուխտի խաչքարի մոտ, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգիստ 1915 թ. Հայոց Եղեռնի նահատակների համար:

Արարողության ավարտին վերստին հնչեց «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսը՝ ազդարարելով մեր ժողովրդի պատմությամբ վկայված՝ Քրիստոսի հաղթական Հարության անխորտակ զորության մասին:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ եւ բազում հավատավոր հայորդիներ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս հուշարձանը հայ նահատակներին նվիրված առաջին հուշարձանն է Հայաստանում: Այն կառուցվել է 1965 թվականին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ՝ Հայոց Ցեղասպանության 50-ամյա տարելիցի առիթով: Հուշարձանը նաեւ խորհրդանշական գերեզման է ցեղասպանության զոհերի համար. 1965 թ. նոյեմբերին Աղոթքի եւ ուխտի խաչքարհուշարձանի ներքո ամփոփվել են Դեր-Զորից բերված նահատակների աճյուններ:

Ապրիլի 24-ի առավոտյան, մինչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով մատուցված Հայրապետական Ս. Պատարագը, Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելել էր նաեւ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր զոհերի անմար հիշատակին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԶԱՏԿԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԷՐԵԲՈՒՆԻ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Ապրիլի 24-ին, Սուրբ Հարության տոնի առիթով «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի Ս. Հարություն եկեղեցում ձեռամբ ՔԿՀ հոգեւոր տեսուչ Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Արարողությանը ներկա էին ՔՀԿ վարչության պետի առաջին տեղակալ Ռաֆայել Հովհաննիսյանը եւ «Էրեբունի» ՔԿՀ-ի վարչակազմը՝ գլխավորությամբ գնդապետ Հովհաննես Պետրոսյանի:

Սուրբ Պատարագի ընթացքում Հայր Ռուբենը ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու զատկական պատգամը: Այնուհետեւ դիմելով ներկաներին՝ Հայր Սուրբն ուրախություն հայտնեց ձեւավորվող համագործակցության եւ ՔՀԿ վարչության պատրաստակամության համար, որի շնորհիվ հնարավոր դարձավ Պատարագի կազմակերպումը, ինչպես նաեւ տարբեր ձեռնարկների միջոցով ազատազրկվածների հոգեւոր կանոնավոր խնամատարությունը:

Անդրադառնալով Սուրբ Հարության խորհրդի կարեւորությանը՝ Հայր Սուրբը մասնավորաբար նշեց. «Սուրբ Զատիկը մեր՝ քրիստոնյաներիս հաղթանակի տոնն է: Տիրոջ հարությամբ ոչ միայն խորտակվեց մեղքի ու մահվան իշխանությունը, այլեւ մարդկային նոր կյանքի սկիզբը դրվեց: Այսօր մենք եւս կանգնած ենք Սուրբ Հարության խորհրդի



Հոգեկրոնական վտոեղոպգեսՀ

առջև՝ ոչ միայն ամրապնդելու մեր հավատն ու հույսը, այլև վերափոխելու մեր կյանքը»:

Սուրբ Պատարագի ավարտին եկեղեցու հարեւանությամբ տեղակայված խաչքարի մոտ կատարվեց նաև հոգեհանգիստ՝ ի հիշատակ Մեծ Եղեռնի անմեղ զոհերի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԶԱՏԿԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐՈՒ Ի ՅԻՒՐԻԽ

Ապրիլի 24-ին, Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնին առիթով Ցիւրիխի Տիւպէնտորֆ գիւղաքաղաքի Հռոմէական Ս.Մարիամ Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ հայաձէս Ս. Պատարագ, իսկ Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն Հայոց Ցեղասպանութեան 96 ամեակի անմեղ զոհերի յիշատակին:

Զատկական Սուրբ Պատարագը մատոյց Զուիցերիոյ Հայոց թեմի Առաջնորդական տեղապահ եւ Ժնեւի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ Հոգեւոր հովիւ նորանշանակ Տ. Մեսրոպ Վարդապետ Պարսամեանը, առընթերակայ ունենալով Ցիւրիխի Հոգեւոր Հովիւ Տ. Շնորհք Քահանայ Չէքիճեանը իսկ Ս. Սեղանին սպասարկեցին ուրբակիր դպիրներ ու դպիրներ:

Տաղաւարի սոյն Պատարագին ներկայ էին Ցիւրիխի ու Նէօշաթէլի Եկեղեցական խորհուրդի անդամները գլխաւորութեամբ Ատենապետներ Տիարք Վռամշապուհ Թերզիեանի ու Ալէն Ուկնատի: Այս տարուան Զատկական Ս. Պատարագը աննախընթաց էր իր աւելի քան երկու հարիւր հայ հաւատացեալներու ներկայութեամբ, որոնք պիտի ծանօթանային ու Բարի Գալուստ մաղթէին Զուիցերիոյ Թեմի իրենց նորանշանակ Առաջնորդական տեղապահ Հայր Սուրբին, յանձին Հոգշ. Տ. Մեսրոպ Վարդապետ Պարսամեանի:

Սուրբ Պատարագի աւարտին Հայր Սուրբը ներկաներուն փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութիւնն ու Ս. Յարութեան Տօնի պատգամը որմէ յետոյ կատարուեցաւ նաեւ Հոգեհանգստեան յատուկ կարգ ի յիշատակ Մեծ Եղեռնի աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներուն:

Հայոց Ցեղասպանութեան 96 տարելիցի ոգեկոչման արարողութեան առթիւ ուղերձով մը հանդէս եկաւ նաեւ Զուիցերիա-Հայաստան Ընկերակցութեան Խորհուրդի անդամներէն Դրն. Անդրէաս Տրայզիպնէրը, ով արձագանք եղաւ Զուիցերիոյ ժողովուրդի Հայոց Ցեղասպանութեան հանդէպ դրսեւորած դիւրազգացութեանը ու կիսեց հայ ժողովուրդի վիշտն ու ցաւը:

Ս. Պատարագի աւարտին եկեղեցւոյ յարակից սրահին մէջ տիկնանց յանձնախումբին կողմէ խնամքով պատրաստուած էր Զատկական հիւրասիրութիւն՝ ,Սիրոյ Սե-

դանե, որու ընթացքին Հոգշ. Հայր Սուրբին ցուցադրուած մտերմիկ ու ջերմ ընդունելութիւնը այդպիսի մթնոլորտ մը կը պարգէր, որ կարծէք նորանշանակ Հայր Սուրբը երկար ժամանակէ ի վեր արդէն բոլորին ծանօթ էր եւ կը զգնուէր իր հարազատ յարկին մէջ:

Տիրոջ Հրաշափառ Ս. Յարութեան Տօնը Ցիւրիխի մէջ իր եւրին ահաւասիկ այսպիսի անմոռանալի օր մը կը թողուր:

ՑԻՒՐԻԽԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾՈՒԽ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

2011 թվականի ապրիլի 24-ին Կալկաթայում (Հնդկաստան) մոտ երեք հազար մարդ աղոթեց եւ հարգեց Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակը, որը մեծ մխիթարություն էր սակավաթիվ հնդկահայ համայնքի համար:

Ամեն տարի Սուրբ Զատկի տոնին Կալկաթայի քրիստոնյաները հավաքվում են Անգլիկան Սուրբ Պողոս Մայր Տաճարի հարակից տարածքում՝ փառաբանելու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը: Հոգեւոր եւ մշակութային հանդիսությունը եզրափակում է Կալկաթայի կաթոլիկ արքեպիսկոպոսն իր Զատկական պատգամով: Այս տարի առ ի հարգանք Մեծ Եղեռնի զոհերի՝ տոնախմբության կազմակերպիչները հրավիրել էին հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հայր Խորեն Հովհաննիսյանին՝ աղոթելու եւ իր պատգամը փոխանցելու:

Հանդիսավար անգլիկան հոգեւորական Հայր Անդրյու Սիմիկը մինչ հնդկա-հայոց հոգեւոր հովվին բեմահարթակ հրավիրելը՝ ներկաներին հայտնեց, որ այս տարի Սուրբ Զատիկը համընկնում է Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի հետ եւ մասնակիցներին հրավիրեց աղոթելու 1,5 միլիոն անմեղ նահատակաց համար:

Հայր Խորենը նախ հայերենով աղոթեց Մեծ Եղեռնի զոհերի հոգիների խաղաղության համար, ապա խոսեց Հայոց ցեղասպանության մասին՝ ի մասնավորի ասելով. «Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, ողջ աշխարհի հայությունը ոգեկոչում է Օսմանյան թուրքերի կողմից հայության բնաջնջման փորձը՝ 1915 թվականի 1,5 միլիոն զոհերի հիշատակը: Այդ կոտորածին զոհ գնացին անմեղ ու անպաշտպան մանուկներ, ծերեր, կանայք ու տղամարդիկ… Թուրքական ժխտողականության պատճառով Ցեղասպանությունից հետո մնացած մեր վերքը դեռ չի ապաքինվել, նրանից շարունակում է արյուն ծորալ… Մի ամ-բողջ ազգ խաչին գամվեց միայն քրիստոնյա, միայն հայ լինելու համար…»:

Երեկոյին մասնակցեց նաեւ Հայոց մարդասիրական ճեմարանի երգչախումբը՝ կատարելով հատվածներ Սուրբ Պատարագից:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ԿանգնումիսոցազբվՁ դուսբևանգեցՀ

ԱՊՐԻԼ 24՝ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՋՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Հարուցյալ է Քրիստոս,
հարուցյալ է ազգս հայոց,
հարուցյալ է հայրենի իր պետականությամբ
եւ աշխարհի բոլոր կողմերում վերազարթոնք ապրող
հոգեւոր ու ազգային իր կյանքով;

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ապրիլի 24-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնը եւ համայն հայության հետ ոգեկոչեց հայոց Մեծ Եղեռնի բյուրավոր նահատակների հիշատակը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբանների, ապրիլի 24-ի առավոտյան այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Վեհափառ Հայրապետի գլխավորած եկեղեցականաց դասը՝ ներկայությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ հայոց պետական ավագանու, կատարեց հոգեհանգստյան արարողություն:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրից Նորին Սրբությունը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ հանդիսապետելու Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության հրաշափառ տոնի արարողությունները:

Հայրապետական Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ինչպես նաեւ ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Հայրապետական թափորի ընթացքում ամպհովանակիրներն էին լոնդոնաբնակ բարերար Ստեփան Օվանեսովը, Արա Ալեքսանյանը, «Կլոր Սեղան» միջեկեղեցական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը եւ Մանվել Տեր-Առաքելյանը: Ս. Պատարագին Նորին Սրբությանը որպես առընթերականեր սպասավորում էին Հայաստանի Ավտվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Ս. Պատարագի ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական իր պատգամը հղեց համայն հայ ժողովրդին՝ անդրադառնալով տոնին եւ մեր ժողովրդի

կյանքում Ս. Հարության խորհրդին եւ փոխանցելով ամենքին մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության ավետիսը:

Ս. Հարության ավետիսով Վեհափառ Հայրապետն իր ողջույնները հղեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին, ողջ հոգեւոր դասին, Քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին:

Հավարտ Սուրբ Պատարագի Ալեք եւ Մարի Մանուկյան Գանձապանը տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկաներին վերստին ողջունեց Ս. Հարության կենսաբեր ավետիսով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 96-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԹ ԵՒ ՋԱՏԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ

Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, հայ ժողովուրդը Հայաստանում եւ աշխարհի տարբեր երկրներում նշում է Հայոց Ցեղասպանության բյուրավոր զոհերի հիշատակի օրը: Լեհաստանում բնակվող հայերը եւս անմասն չմնացին համազգային այդ իրադարձությունից:

Երթը, որին մասնակցում էին հատկապես վարշավաբնակ հայերը, կազմակերպվել էր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու լեհահայոց հոգեւոր հովիվ Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանի նախաձեռնությամբ եւ վարշավաբնակ Էդգար Բրոյանի օժանդակությամբ:

Այս տարի Հիսուս Քրիստոսի Հարության տոնը համընկել է Հայոց Եղեռնի օրվան՝ ապրիլի 24-ին: Ուստի, Հայոց Ցեղասպանության 96-րդ տարելիցին նվիրված երթը Վարշավայում տեղի է ունեցել ապրիլի 22-ին՝ Հիսուս Քրիստոսի Խաչելության եւ կենարար Մահվան օրը:

Հայր Տաճատի հրավերին ընդառաջ՝ երթին իրենց մասնակցությունն են բերել նաեւ Լեհաստանում հայ կաթոլիկ երեք եկեղեցիները ներկայացնող հովիվներից երկուսը՝ Հայր Թադեոս Իսակեանիչ-Զալեսկին՝ Գլիվիցեից, եւ Հայր Արթուր Ավդալյանը՝ Վարշավայից:

Երթն ավարտվել է Թուրքիայի դեսպանատան առջեւ, ուր տեղի է ունեցել Հոգեհանգստյան կարգ՝ Ցեղասպանության զոհ դարձած հայոց հոգիների խաղաղության համար: Այնուհետեւ օրվա խորհրդի հետ կապված հնչել են խոսքեր Հայր Տաճատ Ծատուրյանի, Հայր Թադեոս Իսակեանիչ-Զալեսկու եւ Ռաֆիկ Ամիրյանի կողմից:

Հավարտ վերոհիշյալ արարողության հայ ժողովուրդն իր զրավոր բողոքն է թողել Թուրքիայի դեսպանատան փոստարկղում:

Իսկ կիրակի օրը՝ ապրիլի 24-ին, ժամը 12:00-ին, Լեհաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը տեղադրված Խաչքարի առջեւ տեղի է ունեցել Հոգե-

Սուրբ Պատարագ Վարշավայում

հանգստյան կարգ 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում Ցեղասպանության զոհ դարձած հայոց հոգիների խաղաղության համար: Նույն օրը՝ ապրիլի 24-ին, ժամը 14:00-ին, Վարշավայի Ամենասուրբ Աստվածածնի Նկղման եկեղեցում Լեհահայոց հոգևոր հովիվ Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանի ձեռամբ մատուցվել է Սուրբ Պատարագ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով:

Եկեղեցին լեցուն էր հայ եւ օտար հավատացյալներով: Ի զարմանս ներկաների, Լեհաստանում առաջին անգամ հնչեց Կոմիտասյան քառաձայն Պատարագ, որը կատարում էին ազգությամբ լեհ երիտասարդներ: Հայր Տաճատի խրախուսանքի եւ Վարշավաբնակ Յակոբ Կոպչինսկու ջանքերի շնորհիվ երիտասարդները կարողացել էին հրաշալի պատրաստվել զատկական Պատարագին:

Աստվածային նախախնամությամբ տարվույս ապրիլի 24-ը, որը միավորել էր Հայոց Ցեղասպանության հիշատակի օրը եւ Տիրոջ Հրաշափառ Հարության տոնը, Վարշավայում դրեց հիմքը կոմիտասյան անկրկնելի Պատարագի:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ՀԱՅՈՑ
ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՎԵՑ ԵՐԵՒԱՆԻ Ս. ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Ապրիլի 30-ին մայրաքաղաք Երեւանում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, կատարվեց Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու հարեւանությամբ կառուցվող Ս. Անանա եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Ս. Անանա եկեղեցին եւ Ամենայն Հայոց Հայրապետի երեւանյան նստավայրը կառուցվում են բարերարությամբ տեր եւ տիկին Հրայր եւ Անանա Հովնանյանների:

Արարողությանը ներկա էին նաեւ Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը եւ բազում հյուրեր:

Հիմնարկեքի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի հետ սրբալույս մյուռոնով օծեց 16 խաչանիշ քարեր: Օծված քարերը եկեղեցու 16 կնքահայրերը՝ Հրայր Հովնանյանը, Վահագն Հովնանյանը, Ռադիկ Վանունցը, Մարտին Ավետիսյանը, Արթուր Ալեքսանյանը, Վահագն Մովսիսյանը, Աշոտ Պողոսյանը, Աշոտ Ղազարյանը, Արայիկ Յաղջյանը, Գեորգ Յաղջյանը, Արսեն Վարդանյանը, Ավո Խալաթյանը, Վահե Ծխռդմյանը, Գարիկ Չիլինգարյանը, Հայկ Ծատվերյանը եւ Էդվարդ Բալասանյանը զետեղեցին եկեղեցու հիմքերում:

Այնուհետեւ Արշակ Սրբազանն ընթերցեց հիմնարկեքի առիթով կազմված հիշատակարանը: «Բարեհաճ կամոքն Աստուծո 2011 թվականի ապրիլ 30-ին կատարվեց հիմնօրհնեքը Երեւանի Սուրբ Անանա եկեղեցու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի երեւան-

յան նստավայրի, որ կառուցվում են ազգային բարերարներ տեր եւ տիկին Հրայր եւ Անանա Հովնանյան ամոլի ազնիվ հովանավորությամբ՝ ի փառս Աստծու, ի պայծառություն մեր Եկեղեցու եւ ի բարեզարդումն մեր ժողովրդի հոգեւոր կյանքի:

Նորակառույց եկեղեցին օրհնություն պիտի բաշխի նվիրական մեր հողին՝ ծառայելով աստվածասեր մեր ժողովրդի հոգեւոր կյանքի վերազարթոնքին եւ նորոգ պայծառությանը: Թող Սուրբ Անանան հավետ բարեխոս լինի առ Բարձրյալն Աստված՝ վասն Հայրենյաց եւ ազգիս հայոց եւ Եկեղեցույս Հայաստանյայց:

Թող Ամենախնամ Աստված առատապես օրհնի երախտարժան բարերարներ Հրայր եւ Անանա Հովնանյաններին եւ նրանց զավակներին՝ շնորհելով կենաց արեւշատություն, ազգանվեր եւ եկեղեցաշեն գործոց նորանոր հաջողություններ»,- մասնավորաբար ասվում է արձանագրության մեջ: Ապա Նորին Սրբությունը հրավիրեց բարերար Հրայր Հովնանյանին հիշատակարանն ամփոփելու եկեղեցու հիմքերում:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծանոթացավ շինարարական աշխատանքների ընթացքին: Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Չիլինգարյան Դիզայն Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սուրբ Աննա եկեղեցու հիմնարկեքը

Սուրբ Աննա եկեղեցու հիմնարկեքը